

րենց արտածած մետաքսին մաքրը, որ 100,000 անցնող դումար մը եղաւ»։1)

Ասոր համաձայն Անգլիացոց հինգ տարուան մէջ արտածած ընդհանուր մետաքսին արժէքը կը հասնէր 3,500,000-ի մօտ դումարի մը։

Ինչպէս ըսի, մաքսային, առեւտրական եւ քաղաքական այս վտանգաւոր դոյսովիճակին մէջ Հայ վաճառականները արդէն պէտք եղածէն աւելի զլիսու ցաւ ունէին, երբ հրապարակ եկան նաեւ Անգլիական Ընկերութիւնները եւ իրենց մրցակցութիւնները, որոնցմէ Թուրքիոյ եւ Ռուսիոյ Ընկերութեանց պայքարը ամենուն համար ալ արդէտալի եղաւ՝ մեծ հարուած մը տարով Հայ վաճառականութեան ալ։

Այս իրերու հակամարտ տարրերուն մէջ Մեծն Պետրոս ոչ միայն փորձեց իր կողմը գըրաւել Հայ վաճառականութիւնը եւ անոնց շահարէր մետաքսի առեւտուրը, այլ նաեւ 1710ին Իսրայէլ Օրի «Պետրոսից թոյլտուութիւն է խնդրում 20 Հայ ընտանիքներ փոխադրելու Ռուսաստան, որ զբաղուեն մետաքսագործութեամբ»։2)

1715-ին Մեծն Պետրոսի կողմէ Պարսկաստան զրկուած Արդէմի Փէթրովիչ Վալէնսքիի ղեկավարութեան մէջ էր ճան Պէլ Անգլիացին իբր հետեւորդ ղեկավարութեան, որ իր յիշատակները մանրամասնութեամբ հրատարակեց յետոյ։ Ան կը վկայէ․

«Հայերը կը վարեն Պարսկաստանի առեւտուրին մեծագոյն մասը, որովհետեւ Պարսիկները հազուադէպօրէն իրենց երկրէն դուրս կ'ելլան»։3) Իսկ Թաւրիզի «բնակչութեան մեծ մասը Պարսիկներէ կը բաղկանայ, թէեւ հոն կան բազմաթիւ Հայեր։ Անոնք նկատելի վաճառականութիւն ունին հում մետաքսի եւ գոր-

զի արտադրութեան, նաեւ մետաքսի եւ բամպակէ հիւսուածեղէններու»։1) Եւ երբ հոկտեմբեր 12-ին Մէնդլիլի կը հասնի սա նկատողութիւնը կ'արձանագրէ․ «Այս եւ շրջակայ գիւղերուն մէջ կը բուծեն մեծ թիւով շերամներ, որոնք կ'արտադրեն մեծագոյն եւ լաւագոյն մասը հում մետաքսին, որ կ'ելլայ Գիլանի նահանգէն, ուրկէ հայ վաճառականներու ձեռքով կ'արտածուի Ռուսիոյ միջով Հորանտա, եւ մասամբ ալ ցամաքով Հալէպ արեւելեան առեւտուրին համար»։2)

Որ հայերը հում մետաքսի առեւտուրը ղեկ իրենց ձեռքը կը պահէին, այդ կ'երեւայ նոյն իսկ Johan Hanway Անգլիացի վաճառականին վկայութիւններէն 1724 թուականին։ Ան մեզի կուտայ ընդարձակ եւ մեծարժէք վկայութիւններ։

«Հայերը, կ'ըսէ ան, զէնք բարձրացուցին եւ դուրս քշեցին պարսիկները Նախիջևանէն եւ Օրտուպատէն» թրքաց օգնութեամբ։ Ան կ'աւելցնէ, որ Օրտուպատ «նշանաւոր է իր մետաքսեղէնի եւ ուրիշ հիւսուածեղէններու առեւտուրին համար»։3)

Հանուէյ արձագանգ կ'ըլլայ զէպքերու, որոնք որոշապէս ցոյց կուտան այն երկերես քաղաքական պայքարը, որուն կը հետեւէր Անգլիա՝ Ֆրանսայի հետ միասին՝ Մերձաւոր Արեւելքի մէջ, ընդդէմ Ռուսիոյ, ի զին տեղաբնակ քրիստոնէութեան եւ մանաւանդ հայութեան։

1726-ին, մինչ Ռուսերը քիչ շատ տեղաւորուած էին Պարսկական Գիլանի դաւառին մէջ, թրքական զօրամասեր կը յառաջանան Գիլան։ Կ. Պոլսոյ Ռուսաց ղեկավարը կը բողոքէ Բարձրագոյն Դոսան։ «Եւ պատասխանուեցաւ, որ Ռուսերը պէտք է ետ մղեն որեւէ զօրամաս, որ զիրենք կ'անհանդատացնէ, հակառակ դաշնադրին»։ Պատասխան մը, որով թուրքերը կ'ուզէին այնպէս ձեւացնել, որ ու-

1) Under the Turk in Constantinople.— London, 1920, էջ 349:
2) «Մի էջ Հայ-Ռուսական Յարաբերութիւններէց»։— Իրազեկ։— «Հայրենիք» ամսագիր, ԺԱ տարի, Թիւ 2, էջ 95, Ա. սիւնակ։
3) A General Collection of the Best and Most Interesting Voyages and Travels.— 'y John Pinkerton.— London: 1811, էջ 283:

1) մինդ՝ էջ 295:
2) Անդ՝ էջ 310:
3) The Revolution of Persia. Vol. II.— An Historical Account of the British Trade over Caspian Sea.— London, 1765, էջ 213: